տակաւին անդ 3 մեծամեծ խալիւինքն 'ի նշան առատասիրտ գթութեան նորին։

Այլ վասն Յակոբայ առաքելոյն եղբօր Տեառն, գրէ Յովսեպոս Երբայեցի այսպէս. «Հրէայք իբրեւ գիտացին եթէ 'ի դերեւ ելին նենդաւոր խորհուրդք իւրեանց վասն Պօղոսի, դարձան 'ի վերայ Յակոբայ արդարոյն»։ Եւ թէ, «Անանոս քահանայապետ Սադուկեցի դատեալ պարապ յառաջ քան զդալուստ Աղբենեայ դատաւորի յաջորդին Փեստոսի, ատեան կարգեալ ժողովրդեանն ամբաստան եղեւ զՅակոբայ, և մատնեաց զնա 'ի դատաստան մահու (62)։ Բայց Կղեմէնտոս և Հեգեսիպպոս առ Եւսեբեայ, որոց բանից համաձայն են Յայսմաւուրք, Ճառընտիրք և Վարք Սրբոց, այսպիսի օրինակաւ պատմեն զնահատակութիւն արդարոյն։ Կալեալ դպրաց եւ փարիսեցւոց զՅակոբոս, ըստ խրատու քահանայապետին, ասեն ցնա՝ աղաչեմք զքեզ տէր, եկ կաց 'ի վերայ աշտարակի տաճարին զի եղիցիս երեւելի 'ի վերուստ և եղիցին բանք քո լսելի ամենայն ժողովրդեանդ. զի վասն զատկին եկեալ էին ամենայն տոհմքն Իսրայէլի, և հեթանոսք ընդ նոսա։ Հանին կացուցին զնա 'ի վերայ աշտարակի տաճարին աղաղակեցին և ասեն ցնա, Ո՛վ արդար, ասա՛ մեզ, ո՞ր դուռն է խաչեցելոյն Յիսուսի։ Պատասխանի ետ 'ի ձայն բարձր բարբառոյ եւ ասէ. Զի՞ հարցանէք դուք զիս վասն Որդւոյ մարդոյ, նա աւանիկ նստի յերկինս ընդ աջմէ զօրութեան մեծի, եւ հանդերձեալ է գալ ընդ ամպս երկնից։ Բազումք 'ի լսողաց ասէին օրհնութիւն Որդւոյ Դաւթի։ Իսկ դպիրք և փարիսեցիք ասէին՝ չարիս գործեցաք, զի տուաք տալ Յակոբայ վասն Յիսուսի զայսպիսի վկայութիւնս։ Ելին այնուհետեւ և արկին զնա 'ի վերուստ 'ի վայր, և սկսան քարկոծել. եւ նորա ծունր եդեալ աղօթէր. Տէր, թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն. և մի ումն 'ի նոցանէ էառ զտոփանն թափչի և եհար զգլուխ արդարոյն. և այնպէս վկայութեամբ կատարեցաւ երանելին Յակոբոս (63). կացեալ յեպիսկոպոսութեան ամս իբրեւ 30։ Սա 'ի կենդանութեան իւրում գրեաց զթուղթն Կաթուղիկեայց լի շնորհօք Հոգւոյն Սրբոյ։

Այլ վասն դերեզմանի և պատուական նշխարաց արդարոյն